ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 198-Ա

07 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021Թ

ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԳԼԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1–րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Վայոց ձորի մարզի Քարագլխի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն», «Վայոց ձորի մարզի Աղնջաձորի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» և «Վայոց ձորի մարզի Թառաթումբի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ների միացյալ կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 6-ի /մուտք ՆՄ-9420-2021/գրությունը և Արման Հովհաննիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2021 թվականի դեկտեմբերի 8-ից Արման Հովհաննիսյանին նշանակել «Վայոց ձորի մարզի Քարագլխի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրեն, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով :

2. 2021 թվականի դեկտեմբերի 8-ից «Վայոց ձորի մարզի Քարագլխի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Տարոն Մկրտչյանին ազատել տնօրենի պարտականությունների կատարումից:

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություններին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել հանձնման- ընդունման աշխատանքները:

4. Հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:

12/7/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2021թ դեկտեմբերի 7-ի
N198-Ա որոշման

«ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԳԼԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝ Գաբրիելյան Ավագ	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
Անդամներ՝ Մաղաքյան Նարինե	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
Դավթյան Գվիտոն	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ